ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ք.Աշտարակ 2024թ. հուլիսի 8 -ին, N 230 -Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ԱՇՏԱՐԱԿ ՔԱՂԱՔԻ Ս.ՇԱՀԱԶԻԶԻ ԱՆՎԱՆ Հ.2 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՍԱԹԵՆԻԿ ԱՎՈՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 160-րդ հոդվածներով, 164-րդ հոդվածի 1-ին մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N 1392-Ն որոշմամբ հաստատված 3-րդ հավելվածի 61-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Ս. Շահազիզի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ս. Ավոյանի 2024 թվականի հուլիսի 4-ի դիմումը. ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի «Աշտարակ քաղաքի Ս. Շահազիզի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սաթենիկ Ավոյանին տրամադրել ամենամյա երկարացված արձակուրդ 2023-2024 թվականների ուսումնական տարվա համար 25 աշխատանքային օր տևողությամբ՝ 2024 թվականի հուլիսի 11-ից օգոստոսի 14-ը ներառյալ:

2. Սաթենիկ Ավոյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Աշտարակ քաղաքի Ս. Շահազիզի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը ժամանակավորապես դնել «Աշտարակ քաղաքի Ս. Շահազիզի անվան հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Անահիտ Վարդանյանի վրա:

3.Սաթենիկ Ավոյանին աշխատանքի մեջ համարել 2024 թվականի օգոստոսի 15-ից:

Восстановимая подпись

X

VERIFIED OCSP 08.07.2024 17:06:20 GMT+4

Подписано: MOVSISYAN SERGEY 3309890457

Ս. ՄՈՎՍԻՍՅԱՆ